

Կ Ո Չ Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն



Միացեալին Վերականգնացած ՀՈՒՅ ՄԻԱՅՆԱԼ օրուան ուղղութիւնն թՈՅ ՄԻԱՅՆԱԼ պահանջներն ու երկրին ու նպատակը հանգամանքները ուսումնասիրելով՝ այժմ իր միակ ուղղութիւնը ու միակ նպատակն ընտրած է զաւառաբնակ հայութեան մէջ տարածել Գործնական ու Գիւղատնտեսական կրթութիւն: Սորվեցնել թէ՛ հայ մանկտոյնն է թէ՛ հայ գիւղացիին սիրել իր հայրենի հողը ու գիտնալ զայն նւթապէս իր բարձրացման ու բարեկաման ծառայեցնել:

Այս նպատակին ընդգրկուել լուրջ ուսումնասիրութեան ու հմուտ մասնագէտներու եզրակացութեան արդիւնքն է: Եւ այն ընդհանուր խանդավառութիւնը, որ դու ցուցուցիր. հայ ժողովուրդը, ապացոյց մըն է թէ ՀԱՅՈՑ ՄԻԱՅՆԱԼ շխտակ ուղղութեամբ մը ճամբայ ելած է:

Պատմանքը Սակայն սոսկ գերընտիր նպատակի մը յառիլ բաւական չէ. պէտք է լիապէս ու իրապէս իրագործել զայն: Միացեալ Ընկերութեան կեդրոն հասած հազարաւոր խնդրանքները Հայաստանի ու Կիլիկիոյ ամէն անկիւններէն անչափ պահանջ մը կը դնեն Հայոց Միացեալի ստանձնած պարտականութեան հանգէպ: Ընկերութեան ձեռքը գտնուած մանրագնին վիճակացոյցները կը ցուցնեն սրտի անհուն դառնութեամբ մը թէ՛ բազմաթիւ գաւառներու և գիւղերու մէջ հազարաւոր հայեր, զրկուած դպրոցէ, կը տուայտին տգիտութեան ու խաւարի մէջ: Հողն ու հօտն, արտն ու դաշտն կը մնան դեռ նախնական վիճակի մէջ, և հայ գիւղացին գիւղատնտեսական ամենատարրական գիտելիաց անգամ անտեղեակ ըլլաւ:

Լով՝ կը զրկուի Մայր Բնութեան հարստութեան վայելումէն:

Միացեալի Գործը Որ չափով որ ժողովուրդը ստատարած է ՄԻԱՅՆԱԼԻՆ, նոյն չափով ալ Ընկերութիւնը Զանադիր եղած է ձեռք երկնցնել հայ գիւղացիին: Միացեալ Ընկերութիւնը ունի այժմ 56 վարժարան 5097 երկսեռ աշակերտներով և ստանձնած է Կիլիկեան վեց Որբանոցներու դասագիրքերու ու դրացական պիտոյից հայթայթումը, ուր պատուպարուած են 719 որբեր: Միացեալ Ընկերութեան ներկայ տարեկան հասոյթը եղած է 4228 Օսմ. ոսկի և ներկայ տարուան ծախքը 3695 Օսմ. ոսկի: Որովհետեւ դպրոցներէն մաս մը դպրոցական տարեըջանի սկսումէն ամիսներ յետոյ բացուած են, կարելի եղած է 533 Օսմ. ոսկի գումարի առաւելութիւն մ'ունենալ ներկայ պիւտճէով, սակայն նոյն համեմատութեամբ այս հաստատութեանց տարեկան ամբողջ ծախքը պիտի ըլլայ 4551 Օսմ. ոսկի: Ընկերութիւնն ունի մօտ 2500 Օսմ. ոսկի պահեստի գումար մը:

Միացեալի վարժարաններուն մէջ կը պաշտօնավարեն 195 ուսուցիչ, ուսուցչուհի և պաշտօնեաներ: Միացեալի վարժարաններ կը գտնուին Տարօնի, Սասունի, Սեղերդի, Կարինի, Տէքսիմի և Կիլիկիոյ շրջանակներու մէջ:

Կալմոյ Կարնոյ շրջանակի համար շնչանալ Միացեալի վարժարանաց Ընդհանուր Տեսուչ կարգուած է Տիար Միքայէլ Մինասեան, մասնագէտ ամերիկեան համալսարաններէ և ծանօթ իր հրատարակած գիտական ու կրթական

երկրորդ, Անոր օգնական կարգուած է ուրի տարուան փորձառութիւն ունեցող երկրագործ մը, կարևոր գիւղերու մէջ դպրոցներու ըով մասնաւոր պարտէզներ փրամադրելի եղած են մշակութեան համար և լնկերութիւնը արամադրած է կլիմային յարմար հունտեր և մշակութեան յարմար լաւագոյն գործիքներ:

Երկրայ ամրան ամիսներուն կարինի մէջ յույսուած է ամարային վարժապետանոց մը մասնաւորապէս Միացեալի ուսուցիչներուն մանկավարժական և գիւղատնտեսական պատրաստութեան համար: Երկրայէս յառաջիկայ դպրոցական շրջանէն սկսեալ Սանասարեան վարժարանի հետ գործակցարար Միացեալը պիտի բանայ իր Կիւղատնտեսական վարժապետանոց, ուր տեսականը պիտի աւանդուի ձմրան ամիսներուն Սանասարեան վարժարանի շէնքին մէջ, իսկ գործնականը գարնան և ամրան ամիսներուն վանքի մը մէջ:

Միացեալ լնկերութիւնը ձեռնարկած է արդէն վարժարաններ բանալ Սեբրի, Միֆարդինի, Տէհի, Հագրոյի և ուրիշ ըրդոսի շրջանակներու մէջ, ուր մայրենի լեզուին անգլոտութեան պատճառաւ ըսանհիմն հագար հայերը մատնուած են կորսնցնելու իրենց ցեղային առանձնաշատութիւններ և մինչև իսկ ինքնութիւնը:

Կիլիկիոյ Երջանուսկ Եիլիկիոյ շրջանակը Եիլիկիոյ շրջանակը աւելի Միացեալ լնկերութեան կեդրոն մը ընտրուած է, առաջնորդուած այն անխուսափելի պահանջէն զոր արդէտը ստեղծեց հոն: Կիլիկիոյ շրջանակի լնկերութեան Տեսուչ Տիար Միգայէլ Նաթանեան մասնագէտ գիւղատնտես մ'է Նանսիի Համալսարանի երկրագործական բաժնէն շրջանաւարտ, և ծանօթ իր ժողովրդական յողուածներով « Մշակ »ի և ուրիշ արտասահմանեան թերթերու մէջ:

Միացեալ լնկերութիւնը լաւ ըմբռնած ըլլալով թէ իր ծրագրի իսկապէս գործարարան համար անհրաժեշտ են նոյն ուղղութեամբ պատրաստուած ուսուցիչներ ունենալ, իր լաւագոյն փափագներէն մինն

է՝ կրթնած հայ ժողովրդի բարեացակամ աշակցութեան վրայ՝ Կիլիկիոյ շրջանակի մէջ ալ հաստատել Կիւղատնտեսական վարժապետանոց մը, որ միւսնոյն ժամանակ գիւղատնտեսական օրինակելի ազարակ մը ևս ունենայ նոյն շրջանակի մէջ:

Անտարակոյս այս ուղղութեամբ տրուած կրթութեան յաջորդ ըսպլը անհրաժեշտաբար հետզհետէ ազնուացած հունտեր, կենդանիներու և տեղին ու միջավայրին յարմար նորագոյն մեքենաներու մատակարարելն պիտի ըլլայ:

Տնօրէն Ժողովը Միացեալ լնկերութեան գործունէութեան կանոնաւորման և ժակակշոր համար լնկերութեան Տնօրէն ժողովը կազմակերպած է կենդրոնական Դիւանը Կ. Պոլսոյ մէջ: Դիւանը կանոնաւոր և յարատե յարաբերութեան մէջ է գաւառներու հետ, կը հաւաքէ վիճակացոյցներ և ամէն տեղեկութիւններ որոնք կը վերաբերին գաւառական կրթութեան: Միացեալի վարժարանները կը գտնուին արթուն հակողութեան ներքե և պարբերական վիճակացոյցներ ու հաշուետուութիւնները կանոնաւորաբար կը հաւաքուին ու կը պահուին կեդրոնի մէջ:

Մանօթ մասնագէտներէ կազմուած կըրթական Յանձնախումբ մը Տնօրէն խորհրդին կ'աշակցէ կրթական խնդիրներու ուսումնասիրութեամբ և Միացեալի ծրագրին համապատասխան կրթական ու գիւղատնտեսական դասագիրքերու ընտրութեամբ ու պատրաստութեամբ:

Համկրայիտու Խիւանու Պոլի Միացեալ լնկերութեան նը գաւառներու մէջ նախակրթութեան ու գիւղատնտեսութեան ծաւալման հետ զուգընթաց՝ մասնաւոր խնամք մ'ունեցած է ամենուրեք իր կրթական մշակներուն հրահանգ տալ ջանադիր ըլլալ դրացի ցեղերու հետ համերաշխութեան ու արդոյ ոգին մշակել, և գործակցիլ անկեղծօրէն երկրի նիւթական, բարոյական ու քաղաքակր-

թական բարձրացման ու յառաջդիմութեան
Միացեալի վարժարաններու մէջ մայրենի
լեզուին հետ զուգընթացաբար ոյժ տրուած
է պետական լեզուի տարածման, և շատ
տեղեր ալ դրացի ցեղերու տղայք սիրով ըն-
դունուած են իր կրթական շէնքերէն ներս:
Միացեալի Տեսուչներ ու պատասխանա-
տու պաշտօնեաներ մտերիմ յարաբերու-
թեան մէջ են տեղական կուսակալներու
և կառավարական պաշտօնեաներու հետ:

ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼԸ կոչուած է ազ-
գային միութեան, ազգային համերաշխու-
թեան պահանջն լրացնել, ու ցրուած, խոր-
թացած, լքած հայութիւնը հաւաքել կըր-
թական սուրբ խորանին շուրջ: Հոգ, այդ
խորանին մէջ պիտի ծնի, պիտի զարգա-
նայ նորոգ Հայութիւնը, որ ներքին կռիւ-
ք պիտի ատէ, երկպառակութեան քողը պիտի
պատռէ, սին վերացականութենէ պիտի
հեռանայ, ու համախմբուած, խաղաղիկ
ու քանսէր նոր Հայք պիտի փարի Մայ-
րենի հողին, և Մայր Բնունեան ծոցը
թագնուած գանձերը իր մեղուաջան ու
տնտեսագէտ ձեռքերով Ազգային Սեղանին
վրայ պիտի բերէ:

Ընդհանուր ձգտում մը կայ ազգային
միօրինակ կրթութիւն մը ստեղծելու մէկ
հոգի, մէկ խտէլ ներշնչելու ամբողջ հա-
յութեան: Էւ այս ազնիւ ձգտումին իրա-
կանացման համար ամէնքը աչքերնին դար-
ձուցած են ղէպ ի Հայոց Միացեալ Ըն-
կերութիւնը, ու ՄԻԱՅԵԱԼՆ ալ, հայ ժո-
ղով՝ ուրդ, ղէպ ի քեզ կը դառնայ և ար-
ձագանք կը հանդիսանայ բնագաւառի Հա-
յու կոչին:

Հայ ժողովուրդ,

Քու փրկութիւնդ նոր ուղղութեամբ
մշակուած կրթութեան մէջն է. օտար հո-
վեր թո՛ղ քեզ չը տարուբերեն: Գիտակե-
ցութեան ու վերազարթնումի այս օրերուն
գեղեցիկ ու ազնիւ պատեհութիւն մը կը
ներկայացուի քեզ կատարելու քու գերա-
զոյն ազգային պարտականութիւնդ, գոր-
ծակցելով Հայոց միակ կրթական ընկե-
րութեան՝ **ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼԻՆ**:

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿ. ՀԱՅՈՑ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԹԵՐ

**ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱ-
ՆԵԱՆ,** Նախկին պատրիարք. — Հայոց
Եկեղեցին և իր Պատմութիւնը, վարդա-
պետութիւնը, վարչութիւնը, Բարեկար-
գութիւնը, Արարողութիւնը, Գրականու-
թիւնը, ու Ներկայ կացութիւնը. Պոլիս
1911. Հրարկ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան.
գին 15 դր.:

ՍԻՄԵՕՆ ՅԱՊՈՅԵԱՆ, — Շիրվանզա-
դէ. զրական-քննադատական ուսումնասի-
րութիւն. Թիֆլիս 1911. տպ. Օր. Ն.
Աղանեանցի. գին 80 կ.:

ԲԱՅՐԸՆ, — Ծովահէնը. (Թրգմ. բնա-
գրից Յ. Զ. Միրզայեանց). Հրարկ. «Փա-
րոս» տպարանի. Թէհրան 1911. գին՝
Պարսկաստան՝ 3 1/2 դրան. Ռուս՝ 65 կ.
տաճկ. 8 դր.:

ՏՕԲ. Ն. ՏԱՂԱՍԱՐԵԱՆ. — Մեր
խեղճ Երկրագործներու մասին արտատը-
պում «Բիւզանդիոն» ի 1909 Նոյեմբեր
3-4 թիւ ընէ. Պոլիս 1909. տպ. «Բիւ-
զանդիոն» ի:

— Դիտողութիւններ Երկրագործական
Պիտտէին վրայ. արտատպում «Բիւզան-
դիոն» ի 1910 Մայիս 31, Յունիս 1, 2,
4, 7, 9, 11 թիւերէն. Պոլիս 1910.
տպ. «Բիւզանդիոն» ի:

— Թուրքիոյ Երեք մեծ Հիւանդու-
թիւնները. արտատպ. «Բիւզանդիոն» ի
թիւերէն Պոլիս 1911. տպ. «Բիւզան-
դիոն» ի:

— Էրկրագործութեան, Կենդանարու-
ծութեան, Անտառաց և Հանքաց վարչու-
թիւններ ու վարժարաններ և Երկրագոր-
ծաց գանձատները. արտատ. «Բիւզան-
դիոն» ի թիւերէն. Պոլիս 1911. տպ. «Բիւ-
զանդիոն» ի:

ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻ (անգիր պատմա-
մաթիսներէ քաղելով վերածեց աշխարհա-
բարի): — Սասմանց Տուն. (Maison
«Sassoun»), պատմավէպ: Պոլիս 1910.
տպ. Նշան-Պապիկեան. [ազատ Մատե-
նաշար թիւ 35]. գին 5 դր.: